ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ

Ինչպես հայտնի է, Սուրբ Էջմիածնում Ամենայն Հայոց Հայրապետի կողքին, իբրև խորհրդատու մարմին, կարևոր և օգտակար աշխատանք է կատարում Գերագույն Հոգևոր Խորհուրդը (հաստատված 1924 թվականի հունվարի 1-ին երջանկահիշատակ Գևորգ Ե կաթողիկոսի հայրապետական կոնդակով) Մայր Աթոռի՝ եկեղեցական, վարչա-կազմակերպչական, շինարարական և ֆինանսական գործունեության հետ առնչվող հարցերի լուծման համար:

Վերջերս Գերագույն Հոգևոր Խորհրդի կազմը համալրվեց հոգևորական և աշխարհական արժանավոր նոր անդամներով՝ Մայր Հայրենիքից և Սփյուռքից:

Գերագույն Հոգևոր Խորհրդի համալրված նոր կազմը բաղկացած է հետևյալ անձերից.

1. **Գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյան,**
   ատենապետ Գերագույն Հոգևոր Խորհրդի.
2. **Գերաշնորհ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյան,**
   առաջնորդ ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի.
3. **Գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյան,**
   լուսարարապետ Ս. Էջմիածնի Մայր տաճարի.
4. **Գերաշնորհ Տ. Զավեն արքեպիսկոպոս Չինչինյան.**
   առաջնորդ Եգիպտոսի հայոց.
5. **Գերաշնորհ Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյան,**
   առաջնորդ ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի.
6. **Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողապպյան,**
   դիվանապետ Մայր Աթոռի.
7. **Գերաշնորհ Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյան,**
   առաջնորդական փոխանորդ Արարատյան թեմի.

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ (1926 Թ.)

8. **Տիար Գրիգոր Խանջյան,**
ակադեմիկոս, ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ.
9. **Դոկտ., պրոֆ. Հակոբ Փափազյան,**
Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան պետական Մատենադարանի միջնադարյան մատենագրության և դիվանական վավերագրերի ուսումնասիրության բաժնի վարիչ,
10. **Դոկտ., պրոֆ. Պիոն Հակոբյան,**
ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի բնագրագիտության բաժնի վարիչ.
11. **Տիար Արմեն Բարսեղյան,**
ատենապետ Փարիզի Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցչական ժողովի,
12. **Տիար Պարգև Շահբազյան,**
քարտուղար Գերագույն Հոգևոր Խորհրդի:

Գերագույն Հոգևոր Խորհրդին առընթեր գործող Վերստուգիչ Հանձնաժողովը ևս համալրվեց հետևյալ կազմով.

1. **Տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյան,**
առաջնորդ Շիրակի թեմի, ատենապետ.
2. **Տիար Մինաս Կարապետյան,**
տնտեսագետ, անդամ.
3. **Տիար Ներսես Գարամանուկյան,**
տնտեսագետ, անդամ:

Սույն թվականի սեպտեմբերի 16-ին Վեհարանում գումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նոր կազմի անդրանիկ նիստը՝ նախագահությամբ Ամենայն Հայոց Հայրապետի, որը ուրախությամբ ողջունեց նոր անդամներին՝ լիակատար հաջողություն մաղթելով նրանց իրենց հետագա գործունեության ճանապարհին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
14 հոկտեմբերի 1986 թ.